



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԱՆ
ՍԱՐԳՍԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և 24-րդ կետերի, 29-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 9-րդ հոդվածի 15-րդ մասի՝ որոշում եմ.

- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Աքորի բնակավայրի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արման Սարգսի Սիմոնյանին 2024 թվականի հունվարի 03-ին ազատել պաշտոնից՝ լուծելով նրա հետ 04 ապրիլի 2023 թվականին կնքված թիվ 132 աշխատանքային պայմանագիրը:
- Արման Սարգսի Սիմոնյանի աշխատանքային վերջին օր համարել 2024 թվականի հունվարի 03-ը:
- Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Արման Սարգսի Սիմոնյանին հետ վերջնահաշվարկի կատարումը:
- Որոշումը ծանոթացնել Արման Սարգսի Սիմոնյանին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունվարի 2024 թվականի N 2-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ
ԿԱՌՈՒՅՑԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ 06-002-0054-0072
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 18.12.2023թ N 109-Ա որոշման 50-րդ կետը, սեփականության իրավունքի N 13112023-06-0014 (գաղտնաբառ՝ Y6FDBGDF2AE) վկայականը, վճարման անդորրագրերը՝

որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Գ. Օսիայան փողոց, 26 հասցեում գտնվող, 98.9 քմ արտաքին մակերեսով տնտեսական սենյակով ավտոտնակը՝ 101670 (հարյուր մեկ հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00374 հա մակերեսով բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0054-0072/՝ 29621 (քսանինը հազար վեց հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Գուրգեն Միշայի Մնացականյանին:

2. Նշված գույքի առք ու վաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Գուրգեն Միշայի Մնացականյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունվարի 2024 թվականի N 3-Ա

**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0084-0042
ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.114278 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական նքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Զեմֆիրա Արամայիսի Հովհաննիսյանի կողմից լիազորված անձ Ինա Էդիկի Պետրոսյանի դիմումը, սեփականության իրավունքի N 25102021-06-0058 վկայականը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» Ա/Զ-ի կողմից կազմված /չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրեր՝ 2023GTKZMB, 2023J6NEJB, 2023QUWHEY, 2023TQJGPQ, 2023DUKKEK/ հողամասի և շինության հատակագծերը, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրերը՝

որոշում եմ.

1. Լոռու մարզի Ալավերդի համայնքի գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 57/2 հասցեով, 06-112-0084-0042 ծածկագրով ընդհանուր օգտագործման 0.114278 հա մակերեսով հողամասում գտնվող, 158.5 քմ մակերեսով բնակելի տունը բաժանել հետևյալ 5 միավորների և տրամադրել հասցեներ.

1.1. Մանուկ Հարությունի Խրիկյանին նվիրատվության պայմանագրով պատկանող, բնակելի տնից բաժանված՝ 31.5 քմ մակերեսով գույքի հասցեն թողնել

նույնը՝ համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 57/2 փոստային հասցեն:

1.2. Աղասի Կարապետի Սահակյանին նվիրատվության պայմանագրով պատկանող, բնակելի տնից բաժանված՝ 14.5 և 2.9 քմ մակերեսներով գույքերին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 57/3 փոստային հասցեն:

1.3. Սաթենիկ Ռուզվելտի Սահակյանին նվիրատվության պայմանագրով պատկանող, բնակելի տնից բաժանված՝ 14.3 և 2.9 քմ մակերեսներով գույքերին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 57/5 փոստային հասցեն:

1.4. Ռուբեն Կարապետի Սահակյանին նվիրատվության պայմանագրով պատկանող, բնակելի տնից բաժանված՝ 14.2 և 2.9 քմ մակերեսներով գույքերին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 57/6 փոստային հասցեն:

1.5. Նունե Նազարյանին նվիրատվության պայմանագրով պատկանող, բնակելի տնից բաժանված՝ 20.2 և 2.9 քմ մակերեսներով գույքերին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 57/7 փոստային հասցեն:

2. Բնակելի տան մնացած՝ 52.2 քմ մակերեսով տարածքը ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող մաս է:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունվարի 2024 թվականի N 4-Ա

**ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-022-0051-0011 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՐԱՆՑԵԼՈՒ,
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՆՅԱԿԸ ԵՎ
ԿԱՏԱՐՎԱԾ ԶԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 14.12.2023թ. N 1425-Ա որոշումը, Մարինե Օմարի Վարդևանյանի դիմումը, 24 հոկտեմբերի 2023 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, լրացուցիչ վկայագիրը, սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 1764086 վկայականը, «ՏՄ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, մասնագիտական եզրակացությունը, Աքորի բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 19.12.2023թ. տրված N 6827 տեղեկանքը՝

որոշում եմ.

1. Հաստատել Ալավերդի համայնքի Աքորի գյուղի 5-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 4 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-022-0051-0011 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի 0.04163 հա մակերեսը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից տրված հատակագծի և մասնագիտական եզրակացության:

2. Օրինականացնել Ալավերդի համայնքի Աքորի գյուղի 5-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 4 հասցեում գտնվող, Մարինե Օմարի Վարդևանյանին ժառանգության իրավունքով պատկանող, 06-022-0051-0011 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.04163 հա մակերեսով հողամասում գտնվող բնակելի տանը կից

2015թ. ինքնական կառուցված, կադաստրի կոմիտեում 2023SRQZRA ծածկագրով հաշվառված, 22.1 քմ արտաքին մակերեսով (18.4 քմ ներքին մակերեսով) տնտեսական սենյակը, կատարված 2 միջնորմների ձևափոխությունները:

3. Ինքնական կառուցված շինությունները և կատարված ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Օրինականացված օժանդակ շինության՝ տնտեսական սենյակի և կատարված ձևափոխությունների համար սահմանված 13338 (տասներեք հազար երեք հարյուր երեսունութ) ՀՀ դրամ արժեքով վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունվարի 2024 թվականի N 5-Ա

**ՎՐՈՒՅՐ ՎԱՆԻՉԿԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ, ԳՅՈՒՂ ԱՔՈՐԻ, 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԶԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002թ. N 88-Ն որոշումով, հիմք ընդունելով Վրույր Վանիչկայի Սիմոնյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 08112012-06-0216 վկայականը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի կողմից 06.09.2023թ. տրված N 4799 տեղեկանքը, «ՔԾՓԿ» ԲԲ ընկերության կողմից 20.11.2023թ. տրված շինության տեխնիկական վիճակի մասին N 15/319 եզրակացությունը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքը, հողամասի ու շինության հատակագծերը և մասնագիտական եզրակացությունը՝

որոշում եմ.

1.Փոփոխել Ալավերդի համայնքի Աքորի գյուղի 3-րդ փողոց, 2 հասցեում գտնվող, Վրույր Վանիչկայի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-022-0041-0005 կադաստրային ծածկագրով, 0.03 հա մակերեսով հողամասում կառուցված շինության գործառնական նշանակությունը և այն հաշվառել՝ հասարկական նշանակության որպես առևտրի սրահ օգտագործելու:

2.Շինության գործառնական նշանակության փոփոխության համար նախագծման թույլտվություն չի տրամադրվում, քանի որ առկա ձևափոխություններն օրինականացվել են սույն որոշման 3-րդ կետով:

3.Օրինականացնել համայնք Ալավերդի Աքորի գյուղի 3-րդ փողոց, 2 հասցեում գտնվող, 06-022-0041-0005 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.03 հա մակերեսով, Վրույր Վանիչկայի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, 2016թ. ինքնական կառուցված, կադաստրի կոմիտեում 2023KWQHAK ծածկագրով հաշվառված, ընդհանուր՝ 103.8 քմ արտաքին մակերեսով (98.5 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով առևտրի սրահի մասը, կատարված՝ 2 հատ դռան, 2 հատ պատուհանի և 8 հատ միջնորմների ձևափոխությունները:

4.Ինքնական կառուցված բաց պատշգամբով առևտրի մասը, կատարված ձևափոխությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Օրինականացված բաց պատշգամբով առևտրի մասի և կատարված ձևափոխությունների համար սահմանված 191931 (հարյուր իննսունմեկ հազար ինը հարյուր երեսունմեկ) դրամ արժեքով վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 06-Ա

ՀԵՂԻՆԵ ԾԻԾԻԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, 18 -րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ թիվ ՆՄ/15.4/1-2024 գրությունը և Հեղինե Ծիծիլյանի՝ 03.01.2024 թվականի դիմումը՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հեղինե Ծիծիլյանին 2024 թվականի հունվարի 04-ին ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով նախատեսված կարգով նշանակել ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի/մասնակիցներից մեկի/կողմից զբաղեցնելը:
- Հեղինե Ծիծիլյանի հիմնական աշխատավարձի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված և հետագայում ամենամյա կարգով հաստատվող հաստիքային միավորի պաշտոնային դրույքաչափին համապատասխան: Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը և կատարված աշխատանքի դիմաց տրված լրացուցիչ աշխատավարձը (լրացուցիչ աշխատավարձը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող հավելումները, հավելավճարները, լրավճարները և պարգևատրումներն են):
- Աշխատաժամանակի ռեժիմի և ամենամյա արձակուրդի տեսակի և տևողության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային գործող օրենսդրության, այլ իրավական ակտերի, աշխատակազմի կանոնադրության և Հայաստանի Հանրապետության Ալավերդի համայնքի ղեկավարի իրավական ակտերին համապատասխան:
- Հեղինե Ծիծիլյանին՝ 2024 թվականի հունվարի 04-ին անցնել իր լիազորությունների իրականացմանը. ղեկավարել աշխատակազմի ընթացիկ գործունեությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, իրավական այլ ակտերով, Հայաստանի Հանրապետության Լոռու

մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ և համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԳԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 07-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԳԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱԾԱԳ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 29-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 9-րդ հոդվածի 15-րդ մասի և հիմք ընդունելով Ռոմիկ Վարդանյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Արևածագ բնակավայրի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Էդիկ Վազգենի Հովհաննիսյանին 2024 թվականի հունվարի 04-ից ազատել պաշտոնից՝ լուծելով նրա հետ 04. հունվարի 2023 թ-ին կնքված թիվ 10 աշխատանքային պայմանագիրը:

2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Էդիկ Վազգենի Հովհաննիսյանի հետ վերջնահաշվարկի կատարումը:

3. Ռոմիկ Սուրենի Վարդանյանին 2024 թվականի հունվարի 04-ին նշանակել Ալավերդի համայնքի Արևածագ բնակավայրի վարչական ղեկավար և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:

4. Որոշումը ծանոթացնել Էդիկ Վազգենի Հովհաննիսյանին և Ռոմիկ Սուրենի Վարդանյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. հունվարի 03

ք. Ալավերդի



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 թվականի N 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՄԼՈՒՂ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՎԱՐՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 29-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 9-րդ հոդվածի 15-րդ մասի և հիմք ընդունելով Գագիկ Ղազարի Սարուխանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Շամլուղ բնակավայրի վարչական ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Արամի Աղաբաբյանին 2024 թվականի հունվարի 04-ից ազատել պաշտոնից՝ լուծելով նրա հետ 10 մարտի 2023 թ-ին կնքված թիվ 127 աշխատանքային պայմանագիրը:

2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Արթուր Արամի Աղաբաբյանի հետ վերջնահաշվարկի կատարումը:

3. Գագիկ Ղազարի Սարուխանյանին 2024 թվականի հունվարի 04-ին նշանակել Ալավերդի համայնքի Շամլուղ բնակավայրի վարչական ղեկավար և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:

4. Որոշումը ծանոթացնել Արթուր Արամի Աղաբաբյանին և Գագիկ Ղազարի Սարուխանյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024 թ. հունվարի 03

ք. Ալավերդի



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 9-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԹԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի և հիմք ընդունելով Յուրիկ Վարուժանի Ավետյանի դիմումը՝ **որոշում եմ**.

- Յուրիկ Վարուժանի Ավետյանին 2024 թվականի հունվարի 04 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ծաթեր բնակավայրի վարչական ղեկավար:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:
- Յուրիկ Վարուժանի Ավետյանին՝ անցնել պարտականությունների կատարմանը 2024 թվականի հունվարի 04-ից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՇԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ ՆՃԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի և իմք ընդունելով Սամվել Ռուբենի Թանդիլյանի դիմումը՝ **որոշում եմ**.

- Սամվել Ռուբենի Թանդիլյանին 2024 թվականի հունվարի 04 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ծաղկաշատ բնակավայրի վարչական ղեկավար:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:
- Սամվել Ռուբենի Թանդիլյանին՝ անցնել պարտականությունների կատարմանը 2024 թվականի հունվարի 04-ից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ԱՅՐՈՒՄ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի և իմք ընդունելով Լևոն Խաչիկի Չաքարյանի դիմումը՝ **որոշում եմ**.

- Լևոն Խաչիկի Չաքարյանին 2024 թվականի հունվարի 04 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Մեծ Այրում բնակավայրի վարչական ղեկավար:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:
- Լևոն Խաչիկի Չաքարյանին՝ անցնել պարտականությունների կատարմանը 2024 թվականի հունվարի 04-ից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՃԱՃԿՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի և հիմք ընդունելով Լյովա Ալբերտի Պետրոսյանի դիմումը՝ **որոշում եմ**.

- Լյովա Ալբերտի Պետրոսյանին 2024 թվականի հունվարի 04 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Կաճաճկուտ բնակավայրի վարչական ղեկավար:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:
- Լյովա Ալբերտի Պետրոսյանին՝ անցնել պարտականությունների կատարմանը 2024 թվականի հունվարի 04-ից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ. հունվարի 03

ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՔՈՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի և ուրիշ ընդունված Հրահատ Վարդանի Սիմոնյանի դիմումը՝ **որոշում եմ**.

- Հրահատ Վարդանի Սիմոնյանին 2024 թվականի հունվարի 04 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Աքորի բնակավայրի վարչական ղեկավար:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:
- Հրահատ Վարդանի Սիմոնյանին՝ անցնել պարտականությունների կատարմանը 2024 թվականի հունվարի 04-ից:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 14-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի և հիմք ընդունելով Սուսաննա Գուրգենի Շահվերդյանի դիմումը՝ **որոշում եմ**.

1. Սուսաննա Գուրգենի Շահվերդյանին 2024 թվականի հունվարի 04 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Այգեհատ բնակավայրի վարչական ղեկավար:
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:
3. Սուսաննա Գուրգենի Շահվերդյանին՝ անցնել պարտականությունների կատարմանը 2024 թվականի հունվարի 04-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ. հունվարի 03

ք. Ալավերդի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԿՈՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի, 6-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի և հիմք ընդունելով Հերմինե Պետրոսյանի դիմումը՝
որոշում եմ .

- Հերմինե Պետրոսյանին 2024 թվականի հունվարի 03 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Քարկոփ բնակավայրի վարչական ղեկավար:
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ Ի ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ Ի ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԺՈՐԱ
ԳԵՎՈՐԳԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 130-րդ հոդվածի և հիմք ընդունելով Ժորա Զարգարյանի՝ 29 դեկտեմբերի 2023 թվականի դիմումը՝ որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի պաշտոնակատար Ժորա Զարգարյանին 03. 01.2024 թվականին ազատել աշխատանքից՝ լուծելով նրա հետ՝ 12 փետրվարի 2023 թ-ին կնքված թիվ 34 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2024թ. հունվարի 03
ք. Ալավերդի



Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունվարի 2024 թվականի N 17-Ա

ԷԴՈՒԱՐԴ ԱՆՄԵՂԻԿԻ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱԿՈՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստան Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեներ պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշման, և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Էդուարդ Անմեղիկի Ահարոնյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 06032014-06-0001, N 03072018-06-0016 վկայականները, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՂՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ-ի կողմից տրված հատակագծերը՝

որոշում եմ.

1. Էդուարդ Անմեղիկի Ահարոնյանին սեփականության իրավունքով պատկանող հասարակական նշանակության գույքերը միավորել և առաջացած մեկ միավոր գույքին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սայաթ-Նովա փողոց, 14 շենք, 35 փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alavardimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 հունվարի 2024 թվականի N 18-Ա

**06-002-0012-0061 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.1290 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ՀՈՂԱՏՆԱԳՐՈՒՄ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆՎԱՐՏ ԱՅԳԵՏՆԱԿԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԱՌՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ,
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, Ժողովրդական պատգամավորների Ալավերդի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 10/06/1991 թ կայացած նիստի թիվ 3/2 արձանագրությունը, «Մանուշակ» N 9265 այգեգործի վկայականը, Ժառանգության իրավունքի վկայագիրը, «SU-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը՝

որոշում եմ.

1. Վերականգնել Վարուժան Խեչիկյանին Ժառանգության իրավունքով պատկանող, Ալավերդի քաղաքի Ազատամարտիկների փողոցի հարավային մասում (ծածկագիր՝ 06-002-0012-0061) գտնվող, 0.1290 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի հողատեղամասի հիմքերը, սեփականության իրավունքը:

2. Հողամասում առկա է անավարտ 80.79 քմ արտաքին մակերեսով (58.1 քմ ներքին մակերեսով) այգետնակ, որը ենթակա է գրանցման նշագծված տարբերակով:

3. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Ազատամարտիկների փողոցի հարավային մասում գտնվող անշարժ գույքին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ազատամարտիկների փողոց, 15 այգետնակ փոստային հասցեն:

4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՆԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի և հիմք ընդունելով Արկադի Չավենի Սիմոնյանի դիմումը՝ **որոշում եմ**.

